32. ԹԱԳԱՎՈՐԻ ԾՈՒՌ ՓԵՍԵՆ

Կէղնի, չէղնի տղա մը կէղնի։

Այդ տղան շատ հարուստ կէղնի։ Իր հայրն ու մայրն կմեռնին։ Տղան կհուսահատի, կէլնի կէրթա նեճիրի։

Միամիտ նեճիրըմ սարերու մեջ ռաստ կիգա։ Ատիկ կընկնա նեճիրի հ՝ետևեն, ղնեճիրն կկծկըցու, հասվեհաս կէղնի օր ըռնե։ Ուր ուրախութենեն թրֆընքով կղարկե, նեճիրն կընկնա։ Կէրթա, կիշե օր մեկ հավորիկ, օր իսկի աչք չի քիսեր է։ Կըսե.—Ախըր քանի օր ղէդի սպաննեցի, հեշօլմասըն բերեմ ղէդի կերակուր մ՝էնիմ ուտեմ։

Կբերե կիգա, օր ղէդի մորթե, շատ կխղճահարվի, կասի. «Ծրանի թե ղէդի չեք ըսպանի։ Քանի օր բախտս էսպես բերեց, արդըխ բան մը պիտի ուտիմ»։

Կբերե սրտիկն ու քըրաճիկն կհանե։ Ատ տեղ կրակըմ կէնե, կէփե ղսրտիկն ու քըրաճիկն ու կուտե։

Մեկեր էդ տըյրի թըլըսմ էնպես էր օր ըտոր սրտիկն ու քըրաճիկն ուտող մարթըն ինչ խնդրե աստուծմե, աստված կկատարե։

Ատ մարդն կվերադառնա իր տունն։ Իր գալու ժամանակին կասե.— Ես ըդ ի՞նչ բան էրի, էտ տըյր սպաննեցի, երանի թե չըք ըսպանիր ի։

Կասի.— Աստված, երանի թե դու զիմ խելք առներ։

Անմիջապես աստված խելք կառնե։

Արթըխ ինք կէղնի խենթ-խելառ մարդ։

Իր ամբողջ հարստությունն ամբողջ կկորցու։ Ինք կէղնի տեսակըմ, զինք կղարկի ըստին, ընդին, կէղնի յարալի, սոսկալի մարդ մը։

Ատ տեխեն կգնա, քաղաքից կէլլա ու կէրթա։ Նորեն ինք քաղաք կէրթա, կէրթա կհասնի թագավորական քաղաք։

Ըտ քաղաքի մեչ կպտտի։

Ըտ խենթ ուր պրտրտելու մեչ թըղ մնա։

Ըտ քաղաքի միջու թագավորի կնիկ կմեռնի։ Իրեք օր մեջտեղ կընցնա։ Ըտոր ախչիկն ուր հոր վրեն կնայի տեսնա քի, ինոր էրիսի ըռանկ մե տեսակըմ կտաւնա։

Ախչիկն կըսե.— Վա՜յ, էդա իրեք օր իմ մայրն մեռեր է, կարծես թե իմ հոր վրեն ինչ օր փոշի մաղին։

Իր հայր կլսե զէդ բան։ Կըսե. «Ես թագավոր մը էղնիմ, մեկ կնկով ես մարդ էղնի՞մ, կամ աղեկ էղնիմ, կամ վատ էղնիմ։ Ուրեմն էնպես է, զախչիկ էնպես ալչախ մարդու մը իտամ, օր աշխար քըն զէնի ալչախ մարդ չէղնի»։

Լալային կըսե.— Լալա, գնա ըտ քաղաքին մեջ պրտրտիր, անպես ալչախ մարդըմ գտիր, օր իր նման հեչ չէղնի։

Կիգա լալեն, կպրտրտի, կգտնա զէդ ծուռ մարդ։ Կբռնե զէդ ծուռ մարդ, կբերե թագավորի քով։ Թագավոր կտեսնա քի ըտըրա նման մարդ չը կա։

Թագավոր ըտ ծռուն կըսե.— Իմ ախչիկ կիտամ քըզի։

Լալային կըսե.— Տար զէդ ծուռ էն իմ ախչկա հ՝օդեն ու արի։

Կտանի ծուռն ախչկա հ՝օդեն։

Ախչիկ կտեսնա օր ծուռըմ հ՝օդայի հետ էկավ, հազար հատ լե ճանչ հետ։

Կըսե.— Աման, էդի ի՞նչ պիտի էղնի։

Ծառային կըսե.— Շուտ հաց տուր ըտըրան, թըխ էրթա։

Կբերե իգա լալան, ասպես տաստե մը հաց կիտա ըտըրան։

Ծուռ կըսե.— Թագավոր զուր ախչիկ ընձի է տվիր, չըմ էրթա։

Ախչիկ կասե.— Մե քիչ լե շոր տուր ուրին, թըղ էրթա։

Կբերե շոր կիտա։

Ծուռ կըսե.— Ես չըմ էրթա, թագավոր զուր աղչիկ ընձի է տվի, չըմ էրթա։

Սորա ծառային կըսե.— Մե քիչ լե փարա տուր։

Ծառան կառնե մե քիչ փարա, կուտա ծռուն, կըսե.— Առ քըզի, գնա։

Էն կըսե.— Չըմ էրթար, թագավոր զուր ախչիկ ընձի է տվիր։

Ախչիկ ըտըրա վերեն կմտածե, կըսե.—Ատ ի՞նչ բան պիտի էղնի։ Կարելի է օր ես իմ խոր զէդ խըսեն ըսեր իմ, կարելի է ըտըրաց է բարկացեր ի։

Ախչիկը կըմբռնե, օր իր ըսած խոսքիցն ի բարկացեր հայրն ոչ զինք ըտ ծուռն տվի։ Ախչիկ չարահատյալ մնալով, կընթռնե։

Հրաման կէնե ծառաներուն, կըսե.— Տարեք ըտ ծուռ համամ։

Ծառաներ կվերցուն, կտանեն զէդի համամ։

Համամլամիշ կէնեն, ծեռքըմ շոր կհագցուն, կվերադարձուն կբերին ախչկա հ՝օդեն։ Ախչիկ կիշե տեսնա, օր բանի չը նմանի, չը մարամաթվի ըտ ծուռ։ Իր ամոթուն կառնե զէդ ծուռն, ըդ տեխեն թարկի տունյա կէղնի։

Ճանապարհ էրթալու մեջ ախչիկ ըտըրաց կվախենա, կառնե մեկ յախլուխ խնձոր հետ։ Ամեն տիր օր ըտ շատ ծուութեն կէնե, մեկ խնձոր կիտա։

Կիգան մեկ քաղաքի մը մեջ։ Արթըխ իր ամչընելուն շընլըք տեխրանք չէրթա, մե խարաբա էրխիկի մեջ կմնա։

Ըտ տեխ մնալու ժամանակին ախչիկ կհուսահատի, ըտ ծուռն կըսե.—Մալ միրաթ, ես թագավորի ախչիկ իմ, էկիր իմ, ես քըզի առնիմ, իսկի չէ քո աստծուն կանչե, աստված թըղ պստիկ հ՝օդա մի տա, մեջ բնակվինք։

Ծուռ կըսե.— Խնձորըմ տուր ուտիմ։

Ախչիկ խնձորըմ կիտա։

Ծուռ կըսե.—Աստվա՜ծ, թագավորի ախչկա խնդիրքն կատարիս։

Կնայե տեսնա աստծու հրամանով մե հ՝օդա մը շինված, իրանք էրկուսն մեջն ին։

Ախչիկ կըսե.— Ուրեմն ըտ ծրռու տակ բան կա։ Ցավաշ մեկ լե իտամ աստծուն խնդրվածք անե, աստված ըտրա խնդրվածք կկատարե։

Կըսե.— Ծուռ, քու աստծուն կանչե, մե քիչ փարա թըղ իտա, ապըրվինք ինով։

Ծուռ կըսե.— Տուր խնձորըմ, ուտիմ։

Ախչիկ խնձորըմ կիտա։

Ծուռ կըսե.— Աստվա՜ծ, թագավորի ախչկան պահանջ կատարե։

Աստված հրաման կընե, բավականին փարա, իրենց հ՝օդայի մեջ կլցու։

Թագավորի ախչիկ կըսե. «Կէրևա իմ ծուռ մարիֆաթ շատ ունի»։ Թագավորի ախչիկ կուրախանա։ Ինքնուրեն կըսե. «Իմ ծուռ տակ շատ բան կա իշալլահ»։

Կըսե.— Ծուռ, աստուծմե խընդրե, մըզի համար անպես քոշկ ու սարե մը թըղ իտա, օր ոչ ոք թագավորի մի չիկա։

Ծուռ կըսե.—Խնձորըմ տուր, ուտիմ։

Խընձորըմ կիտա ախչիկն ծռուն։ Կառնե կուտե։ Կըսե.—Աստվա՜ծ, թագավորի ախչկա խնդիրք կատարիս։

Աստված հրաման կընե, անպես քոշկ ու սարե մը աշխար մե թագավորին չըկա, կշինվի ըտ տեխ պատրաստ։

Իրանք սարեսնու մեչ կնստին։

Ախչիկ կըսե.— Ծուռ, աստծուն խընդրե մըզի թըղ քանի մը միլիոն փարա տա։

Կըսե.—Տուր խընձորըմ, ուտիմ։

Կիտա խընձորըմ, կուտե, կըսե.—Աստվա՜ծ, թագավորի ախչըկա խնդիրք կատարիս։

Աստված հրաման կընե, չափազանց փարա ըտոց սարայի մեչ կլեցվի։

Ախչիկ կըսե.— Ծուռ, աստուծմե խնդրե, թըղ քըզի խելք իտա։

Կըսե.— Խնձորըմ տուր, ուտիմ, օր խնդիրք էնիմ աստծուց։

Խնձորըմ կիտա թագավորի ախչիկ։

Ծուռն կըսե.— Աստվա՜ծ, թագավորի ախչկան խնդիրքն կատարե։

Անմիջապես աստված հրաման կընե, ըդ ծըռուն կատարյալ խելք կիտա։

Ըտ թագավորի ախչիկ ու ըտ տղեն լորդության բայրազ կտնկին։ Ջեն կիտա աշխար, թե՝ ըսպես լորդըմ, մեր քաղաքին մեչ իկեր է նոր։ Այնպես խելոք, իր պես իմաստուն դհա ըտ աշխըրքի մեչ չի կա։

Ուրանք թըղ հոդ մնան, տառնանք վըր թագավորին։

Թագավոր կըսե. «Ջանըմ, ես վախտին իմ ախչիկ տվի ըս տեսակ ծռու մը, չը հարցի, թե ի՞նչպես էղավ։ Ես պիտի ըլլամ դեվրիշ խըլըվի էղնիմ, պըտըտիմ ես, ախչկաս սալըխ առնիմ, ուր օր էղնի»։

Էլավ ու պըտըտավ աշխար։ Պըտըտավ, էկավ, էկավ ըտ քաղաքն, օր իդա ախչիկն ի։

Ըտ քաղաքացու մարդու մը մոտեն հարցուց, թե.— Ըտ քաղաքի մեծ մարգն ո՞րն է։

Ցույց տվեցին զէդի։ Հարցուց ու էկավ ըտոր տուռ։

Էկավ տուռ զարկեց, ախչիկ իլավ, ըզտուռ բացեց, իշեց տեսավ օր ըտի իր պապն էր։

Տարավ ներսի տին, իրանց դիվանի մեչ նըստըցուց։ Թագավոր իշեց, տեսավ օր ըտ սարեն տասնապատին իր սարայից դրհա խորոտիկ է։

Ըսեց. «Աջայիբ ես թագավոր մը իմ, իմ սարեն էդավա խորոտիկ չէ։ Ըտ ի՞նչ խդար մեծ մարդմ է, օր իր սարեն քըն զիմ խորոտիկ է»։

Շատ զարմացավ հ՝ոնի, ախչիկն իքրամ ազաթ էրեց իդոր։

Ախչիկ կճանչներ զուր պապ, պապ չըր ճանչընե զուր ախչիկ։

Մնաց հըր հ՝իրկուն, հ՝իրկուն ախչկա իրիկն դրսեն էկավ։

Թագավոր տեսավ, օր ըտ մարգն շատ աղեկ մարդըմ է ու ուր նման չկա։

Էն գալու բաշտան էլավ թագավոր ու ըտոր առաչ կայնավ։

Ախչիկն խեղճահարավ, թե՝ իմ պապս թագավոր իքան, իդա տեսակ մարդու մը առաջ էլավ կանավ, լաց ու զինք թալեց ուր պապու վրեն։

Ըսավ.— Պապիկ, դու իմ պապն իս, իդա լե ըն ծուռն ի, օր զիս տվիր ուրեն։

Ծեռքեն պագեց, փաթվան իրար։

Ըսավ.— Իմ ախչիկս, քո ըսածտ շիտակ էր, ես սխալ խոսացի, ես մեղա աստծու, դու իմ ախչիկ, ես քու պապ։ Դու օր զիդա ծուռըն ըտ տեսակ մարդըմ իս հանի, սիրով ես ընթունեցի ըզտա մարդ ընձի փեսա։

Ու էլավ ինք, վերադարձավ իր մայրաքաղաք, հրաման էրից ուր սադրազամին, ուր մեծամեծ մալրդերուն, զորքերով, ալայ-չալղով էլան էկան ուր ախչկա քաղաք, վերցին զախչիկն ու փեսան, բերեցին էկան ուր մայրաքաղաք, յոթն օր հարսնիք էրեցին, ուրախություն։

Ընոնք հասան ուրանց սրտի մուրազին, կերաք, խմեցիք, ըզխերն հիշեցեք։

Իրեք խնձոր իջավ աստուծմե, մեկ հեքաթ ըսողին, մեկ լե գրողին, մեկ լե անկաչ էնողին։